ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ

Հայրենիքը սիրում են ոչ նրա համար, որ այն մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:
Սենեկա Կրտսեր

Համլետ Մարտիրոսի Սարգսյան

Ծնվել է 1949թ. մայիսի 23-ին Երևանում: Ավարտել է թիվ 131 միջ. դպրոցը: 1988թ. ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակիցներից է, կամավորական: Մասնակցել է Հայաստանի ինքնապաշտպանությանը և Արցախի ազատագրմանը: Զոհվել է 1993թ. փետրվարի 28-ին՝ Մարտակերտի շրջանում-Սարսանգի ջրամբարի ազատագրման ժամանակ:

Իմ զրուցակիցն է Համլետ Սարգսյանի այրին՝

Արևիկ Օրդյանը:



- Համլետը շատ ազնիվ մարդ է եղել, չի՛ ապրել ուրիշների հաշվին, և երբե՛ք թալանով չի՛ զբաղվել, չի՛ բերել... տարել է իր հետ՝ մեր սերն ու նվիրումը, հաղթանակի հասնելու մեր պատգամը: Մարտական ընկերները Համլետին Արցախ էին ասում: Նա զոհվել է իր հրամանատարին փրկելու ժամանակ: Համլետի կյանքի համար գլխագին էին խոստացել օմոնականները...

- Ի՞նչ վերաբերմունք ունի այսօր հասարակությունը ձեր նկատմամբ:

- Սովորակա՛ն...

- Ավելի հստա՛կ.

- ...Ասեմ: Ընդհանուր առմամբ զոհված տղաների մեջ խտրականություն են դնում թե՛ կառավարությունը, թե՛ հասարակությունը: Ինչու՞... Միայն Համլետին ճանաչող մարտական ընկերներն են հարգանքով վերաբերվում:

- Ինչպե՞ս են վերաբերվում ձեզ՝ այրիներիդ, զոհված հայորդիների մայրերը:

- Մայրերը մեր նկատմամբ ունեն բացասական վերաբերմունք, կասեի՝ թշնամաբար են տրամադրված, չճանաչելով թե ու՞մ և ինչպե՞ս: Շատ կուզենայի, որ փոխեին իրենց կարծիքն ու վերաբերմունքը: Ճիշտ է, որդի են կորցրել: Վիշտ է: Բայց ես էլ իմ երեխայի հորն եմ կորցրել: Մի օր, որդիս՝ Ալեքսանդրը, ասաց. «Մամա դու բախտավոր ես. պապա ունես, մամա ունես, քույր և եղբայր ունես, իսկ ես միայն քեզ ունեմ»:

- Նման արտահայտությունից հետո ինչպիսի՞ն է ձեր որդու վերաբերմունքը :

- Նվիրումով լի է նա և ասում է, որ. «Մենք ենք պաշտպանելու մեր հայրենիքը», էլ ուրիշ խոսք լինել չի կարող: Բոլոր զոհված տղաները պետք է որդի ունենային...իմ կարծիքով:

- Երբ մենակ ես լինում ի՞նչ ես մտածում:

- Երբ մենակ եմ լինում... մտածում եմ , որ խաղաղություն լինի, որ ոչ մի կին այլևս այրի չդառնա, որդեկորույս մայրեր չունենանք: Չունենանք որբացած երեխաներ և հարգանք լինի:

- Ձեզ հե՞տ են Արցախի մարտական ընկերները: Երբևէ դիմե՞լ եք նրանց օգնությանը:

- Երևի հիշում են, բայց չեն այցելում: Գուցե իմ բնակության հասցեների փոփոխությունն է պատճառը, չգիտե՛մ: Բայց երբ տեսնում են ինձ, անտարբեր չեն անցնում: Երբե՛ք չեմ դիմել նրանց, ո՛չ թե օգնության կարիք չեմ ունեցել, այլ մտքովս չի անցել:

- Ի՞նչ մաղթանքներ ունես:
- Զոհվածների երեխաներին մաղթում եմ հաջողություն և առողջություն: Լինեն կանգուն և հայրենիքին նվիրված: Կանանց՝ համբերություն, որ զբաղվեն իրենց երեխաների ապագայով: Մայրերին՝ հպարտություն և հավատ: Իսկ ղեկավարությանը՝ զգաստությու՛ն, որ զոհվածների մեջ այլևս տարբերություն չդնեն և երբե՛ք չասեն. «Թող չգնա՛ր, չզոհվե՛ր...»: Նրանց կարծիքով ո՞վ պետք է գնար, իրե՞նք, որ այսօր անհայրենիք մնայինք: Ո՛չ... մենք պետք է անպարտ լինենք:
- Մայրիկ ես հայրենիք ունեմ գերված, եթե իմ կարիքն էլ զգացվի, ինչպես հայրիկինը... Մեկ նուռը քանի՞ հատիկ ունի, հայրս ինձ մեկ նուռ է նվիրել, ես պետք է փոխանցեմ իմ որդուն...

Իսկ պապը՝ Օրդյան Ռուբենը, թոռնիկին է հղել իր պատգամը.

Դու իմ որդին ես, անունդ Ալիկ,
Ծնվել ես ,որպես Արցախի բալիկ,
Ամեն ժամ հիշի՛ր հայրիկիդ Արցախ,
Նրան, որ հերոս էր՝ քաջ ու անվախ:

Սերը դեպի հայրենիքը քաղաքակիրթ մարդու առաջին արժանիքն է:
Նապոլեոն Բոնապարտ